ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ
ԱՆՈՒՅՇ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Խուդավերդյան,

ի պատասխան Ձեր 28.02.2024թ. հ.003 գրության՝ տեղեկացվում է, որ Արաբկիր վարչական շրջանի Ա. Ավետիսյան փողոցի հ. 70/1 հասցեում գտնվող կաթսայատունը դեռևս 2005 թվականից վարձակալության իրավունքով տրամադրված է եղել «ԵՐՖՐԵԶ» ԲԲ ընկերությանը: Հետագայում «ԵՐՖՐԵԶ» ԲԲ ընկերությունը ճանաչվել է սնանկ, որի շրջանակներում սնանկության կառավարչի կողմից հայտարարված աճուրդով գույքը փոխանցվել է Սոկրատ Գրիգորյանին՝ ում հետ Երևանի քաղաքապետարանը կնքել է վարձակալության պայմանագիր 50 տարի ժամկետով:

Այս պահի դրությամբ կաթսայատունը քանդելու կամ տեղում այլ շինություն կառուցելու վերաբերյալ որևէ դիմում Երևանի քաղաքապետարան մուտքագրված չէ:

Դիմումատուն տարբեր դիմումներով անդրադարձել է նաև կաթսայատան գույքին և դրա տեղաշարժին: Տեղեկացվում է, որ նշված գույքը ոչ թե Երևան համայնքի այլ վարձակալի սեփականությունն է և վերջինիս իրավունքն է իր ցանկությամբ տիրապետելու և օգտագործելու այն:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ Ա. Ավետիսյան փողոցի հ. 70/1 հասցեում գտնվող կաթսայատունը տնօրինվում է օրինական հիմքերով՝ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման, կնքված պայմանագրի և պետական գրանցման համաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ